ԱՆՆԱԽԱԴԵՊ ԵՐԵԿՈ

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԲԵՄԱԿԱՆ ՆՈՐ ԿԵՐՊԱՐԸ

Բեմարվեստի սիրահարների համար առավել հաճելի բան, քան պրոֆեսիոնալ դերասանի ասմունքը, դժվար է պատկերացնել: Թբիլիսահայ հանդիսատեսը, ցավոք, հազվադեպ է ունենում նման հաճելի հնարավորություն: Այդ ցանկալի հնարավորությունը նա վայելեց «Կարդում է Մելանյա Բարսեղյանը» երեկոյին, որը տեղի ունեցավ Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում (ղեկավար՝ Գիսանե Հովսեփյան), Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցու «Եկեղեցասեր տիկնանց միության» նախաձեռնությամբ (նախագահ՝ պրոֆ. է. Ախտյան):

Էմմա Ախտյանը (ձախից), Մելանյա Բարսեղյանը եւ Արմեն Բայանդուրյանը

Մելանյա Բարսեղյանը բեմ հրավիրվեց երեկոյին ներկա թբիլիսահայ մտավորականության, արվեստասերների խանդավառ ծափերի ներքո: Ու դա բնական էր: Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի առաջատար դերասանուհին, որին վերջերս շնորհվել է ՀՀ վաստակավոր արտիստուհու կոչում, արդեն կես դար հիացնում է հանդիսատեսին՝ ուրույն, բարսեղյանական անկրկնելի խաղարվեստով եւ ի վերուստ տրված հարուստ ձայներանգային ելեւէջների շնորհիվ:

Նրա բեմական կենսագրության հետաքրքիր էջերից մեկի բացահայտումն էր անշուշտ այդ երեկոն, ուր Մելանյա Բարսեղյանը ներկայացավ հանդիսատեսի համար նոր՝ Ասմունքողի առինքնող կերպարով:

Հարուստ էր արտիստուհու ընտրացանկը. Եգնիկ Կողբացի, Եղիշե, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Քուչակ, Սայաթ-Նովա, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Հովհաննես Շիրազ, Պարույր Սեւակ, Սիլվա Կապուտիկյան, Վիկտոր Հովսեփյան, Անահիտ Բոստանջյան, Ժորա Սնխչյան...

Ողջույնի խոսք ասաց Էմմա Ախտյանը, Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, «Հայ-վրացական բիզնես-ասոցիացիայի» նախագահ Սամվել Աղեկյանը:

Երեկոն ուղեկցվեց Թբիլիսիի պետհամալսարանի ուսանողուհի Աիդա Բազոյանի ժողովրդական սրտահույզ երգերի կատարումով:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՄՐՑՈՒՅԹ

ԻՆՉ Է ԻՆՁ ՀԱՄԱՐ ՎՐԱՑԵՐԵՆԸ

Քեթեւան Կալանդաձեն եւ Մարի Միսկարյանը

Մարի Միսկարյանը սովորում է Թբիլիսիի թիվ 96 ռուսական հանրային դպրոցի 11-րդ դասարանում: Առաջին պահից սովորական թվացող այս աղջնակին ճանաչել ենք 2015 թվականի Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ու Սովորող երիտասարդության ազգային պալատի համատեղ՝ «Ես սիրում եմ ընթերցել» նախագծի ժամանակ: Նա մեր ուշադրությանն արժանացավ նախագծին ակտիվ ընդգրկվածությամբ եւ համեստ կեցվածքով:

Իսկ ընթացիկ տարվա մայիսի 3-ին Վրաստանի սովորող երիտասարդության ազգային պալատը ամփոփում էր «Իմ պալատը» խորագրով լուսանկարչական մրցույթի արդյունքները: Մրցանակակիրների շարքում էր նաեւ Մարին: Նրա լուսանկարները կրում էին «Բարեկամությունը սկսվում է այստեղից» անունը: Եվ երբ այս մասին տեղեկացա, որոշեցի մոտիկից ծանոթանալ նրա հետ:

Արդեն 4 տարի է, ինչ Մարին Պալատի գրադարանի «Ընթերցասերների ակումբի» ազգային փոքրամասնությունների բաժանմունքի ոչ ֆորմալ առաջնորդներից է: Ցանկացել է է՛լ ավելի խորապես տիրապետել վրացերենին եւ այդ պատճառով էլ դարձել է ակումբի անդամ: Բանիմաց գրադարանավարուհի եւ վրաց լեզվի դասընթացավար Քեթեւան Կալանդաձեի աշխատանքի նկատմամբ նվիրումը մեծապես նպաստել է Մարիի վրացերենի տիրապետման առաջընթացին, ու իր հերթին էլ ուսուցչուհու հանդեպ սերը առանձնակի ձգտումով է լցրել աշակերտուհու հոգին: Տիկին Քեթեւանը խոստովանում է, որ զգալիորեն բարձրացել է աշակերտուհու վրացերենի իմացության մակարդակը, եւ ձեռքբերումներն ակնհայտ են: Մարին ընդգրկված է ակումբի աշխատանքներին, իսկ դրանք բավականին բազմաբնույթ ու շատ են. գրքի շաբաթ եւ շնորհանդեսներ, թարգմանչական մրցույթներ եւ խորհրդաժողովներ, հանդիպումներ գրողների հետ, ցուցադրություններ եւ այլ ակտիվություններ: Ու բոլոր այդ հանդիպումներին ու քննարկումներին նա մասնակցում է հիարկե վրացերենով: Մարին իր անկեղծ երախտագիտությունը չի թաքցնում թե՛ Պալատի, թե՛ սիրելի ուսուցչուհու՝ Քեթեւանի հանդեպ.

- Չեմ չափազանցնում, որ այստեղ կարողացա լավ տիրապետել վրացերենին, իսկ շփումների շնորհիվ՝ ինտեգրվել հասարակության մեջ:

Եվ այս ամենը չի խանգարում ժրաջան աղջկան դպրոցում բոլոր առարկաներից գերազանց առաջադիմություն ցուցաբերել՝ դառնալով ոսկե մեդալի թեկնածու:

Մարիի նախնիները 1915 թվականի Մեծ եղեռնի հետեւանքով են հայտնվել Թբիլիսիում: Նրանք 100 տարի առաջ գաղթել են Մուշից: Կրթության արժեքը լավ իմացող այս տոհմի ներկայացուցիչների շարքում եղել են Թբիլիսիում հայտնի իրավաբաններ, լրագրող, դատախազ, զինվորական, սպա, գրող... Մարիի ծնողները՝ Ալբերտ եւ Կարինե Միսկարյանները, եւս ունեն բարձրագույն կրթություն: Երեւի այդ պատճառով էլ նրանք ավելի են պահպանում ազգային ավանդույթները:

Տան խոսակցական լեզուն հայերենն է: Մարին գիտի հայերենի տառերն ու փորձում է սովորեցնել կրտսեր եղբորը՝ Էրիկին: Եվ ավելին, սերտ կապեր ունեն Մայր հայրենիքի հետ, այնտեղ ազգականներ ունեն, որոնց այցելում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ:

Մարին խնամքով ու երկյուղածությամբ է վերաբերվում իր բաժին ժամանակին, դրա համար էլ վերջին երկու ամսվա ընթացքում հասցրել է մասնակցել իրար հաջորդող միջոցառումներին, այդ թվում՝ «Սերունդ» երիտասարդական կինոփառատոնին, «Վրաց լեզվին նվիրված շաբաթյակին», զուգահեռաբար հաճախել լրագրության դասընթացների: Կովկասյան միջազգային համալսարանի 6-րդ միջազգային համաժողովին նա հանդես է եկել «Սահմանափակ կարողություններով անձանց սոցիալականացումը» զեկույցով:

Շնորհաշատ պարմանուհին պատրաստել է նաեւ անգլերեն զեկույցներ՝ «Հայերի ինտեգրումը վրաց հասարակության մեջ» եւ «Էկոլոգիա» թեմաներով:

Ճիշտ է, նրա հետաքրքրությունների ոլորտը բազմազան է, սակայն մտադիր է ուսումը շարունակել Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետհամալսարանի միջազգային հարաբերությունների բաժնում:

Նշենք նաեւ, որ վերջին մի քանի տարվա ընթացքում Մարին պարգեւատրվել է պատվոգրերով, շնորհակալագրերով, որոնք փաստում են նրա աշխատասիրության ու հետաքրքրասիրությունների մասին: Մաղթենք, որ Մարի Միսկարյանի ապագայի անցնելիք ճանապարհը եւս լինի արգասաբեր ու հաղթական:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼ

ՄԵԿ ԱՄԻՍ՝ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԿՐՔԵՐՈՎ

Հունիսի 14-ին Մոսկվայում, Լուժնիկների մարզադաշտում, Ռուսաստան-Սաուդյան Արաբիա հավաքականների հանդիպմամբ մեկնարկեց ֆուտբոլի աշխարհի 21-րդ առաջնությունը: Դրան նախորդեց առաջնության բացման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցում էին 17 երկրների ղեկավարներ, հայտնի մարզիկներ, հյուրեր:

Եվ ահա, 4 տարի անց, աշխարհասփյուռ ֆուտբոլասերները ուղիղ մեկ ամիս, այն է՝ հունիսի 14-ից հուլիսի 15-ը, շարունակ, ասել է թե, գամվելու են հեռուստաէկրաններին եւ կամ՝ ողողելու մարզադաշտերը: Ռուսաստանն ընդունում է ֆուտբոլի աշխարհի 21-րդ առաջնությունը: Եվ գուցե հենց այս աշխարհի առաջնությունում կստեղծվեն ֆուտբոլային կոմբինացիաներ, որոնք կփոխեն ֆուտբոլի մասին մեր կարծիքը, կխփվեն գոլեր, որոնց մասին կխոսվեն տարիներ շարունակ: Ֆուտբոլային 90 րոպեները նորից միլիոններին կսովորեցնեն զգալ հաղթանակի այն նույն բերկրանքն ու պարտության դառնությունը, ինչ խաղադաշտի 11 ֆուտբոլիստները: Կստիպեն վեր ցատկել, ապշել, հիասթափվել, քանի որ հենց դրանում է ֆուտբոլի գեղեցկությունը՝ 90 րոպեի ընթացքում համախմբել միլիոններին:

Առաջնության խաղերը կանցկացվեն Ռուսաստանի 11 քաղաքների (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Կազան, Եկատերինբուրգ, Սարանսկ, Սոչի, Սամարա, Դոնի Ռոստով, Կալինինգրադ, Նիժնի Նովգորոդ, Վոլգոգրադ) 12 մարզադաշտերում:

Մի քանի խոսք՝ ֆուտբոլի ներկայիս առաջնության մասին

Ֆուտբոլի աշխարհի 21-րդ առաջնությանը մասնակցում է 32 թիմ: Ընտրանիները բաժանվել են 8 խմբի (A խումբ՝ Ռուսաստան, Սաուդյան Արաբիա, Եգիպտոս, Ուրուգվայ: B խումբ՝ Պորտուգալիա, Իսպանիա, Մարոկկո, Իրան: C խումբ՝ Ֆրանսիա, Ավստրալիա, Պերու, Դանիա: D խումբ՝ Արգենտինա, Իսլանդիա, Խորվաթիա, Նիգերիա: E խումբ՝ Բրազիլիա, Շվեյցարիա, Կոստա Ռիկա, Սերբիա: F խումբ՝ Գերմանիա, Մեքսիկա, Շվեդիա, Հարավային Կորեա: G խումբ՝ Բելգիա, Պանամա, Թունիս, Անգլիա: H խումբ՝ Լեհաստան, Սենեգալ, Կոլումբիա, Ճապոնիա): Խաղերի հիմնական մասը կմեկնարկի Թբիլիսիի ժամանակով ժամը 16:00-ին, 19:00-ին եւ 22:00-ին:

Ավելացնենք, որ Բրազիլիայի ֆուտբոլի ազգային թիմը շարունակում է մնալ աշխարհում միակ թիմը, որը մասնակցել է բոլոր մունդիալներին (21): Աշխարհի գործող չեմպիոն Գերմանիայի ազգային թիմը 19-րդ անգամ է մասնակցում եւ այս ցուցանիշով երկրորդն է: Արգենտինայի ազգային թիմը երրորդն է: «Ալբիսելեստե»-ն ԱԱ-ին կմասնակցի 17-րդ անգամ: Աշխարհի առաջնությանը մասնակցող ֆուտբոլիստներից առաջին տեղում Գերմանիայի ազգային թիմի ֆուտբոլիստ Թոմաս Մյուլլերն է, ով 10 գոլի հեղինակ է: Նրան հաջորդում է Կոլումբիայից Խամես Ռոդրիգեսը՝ 6 գնդակ: Իսկ եռյակի վերջում մի քանի ֆուտբոլիստներ են՝ Լիոնել Մեսսի, Գոնսալո Իգուային (երկուսն էլ՝ Արգենտինա), Թիմ Կեխիլ (Ավստրալիա), Լուիս Սուարես (Ուրուգվայ): Նրանք խփել են 5-ական գնդակ:

Մասնակից ընտրանիների շարքում «ամենաանփորձը» Թունիսն է՝ ընդհանուր 462 խաղ:

ՆՎԵՐ՝ ՎՐԱՍՏԱՆՑԻ ՖՈՒՏԲՈԼԱՍԵՐՆԵՐԻՆ

Ֆուտբոլի վրաստանցի երկրպագուները 2018 թվականի աշխարհի առաջնության բոլոր հանդիպումները կդիտեն Առաջին ալիքի եթերում:

Մրցաշարը կտեւի մեկ ամիս: Բացի խաղերից, հեռուստադիտողին ուղիղ եթերով սպասվում են հետաքրքիր հաղորդումներ, խաղերի վերլուծություն, օրվա գլխավոր իրադարձություններ, սոցիալական ցանցի վերլուծություն եւ հետաքրքիր այլ հաղորդաշարեր:

Ֆուտբոլի երկրպագուները նաեւ հնարավորություն կունենան մասնակցել Առաջին ալիքի «Ֆուտբոլային տրամաբանություն» մրցույթին եւ շահել գլխավոր մրցանակը՝ 2018 թվականի ավտոմեքենա, բացի այդ, կան այլ մրցանակներ՝ հեռախոս, հեռուստացույց: Խաղարկությունը կտեւի հունիսի 13-ից հուլիսի 15-ը:

Եթե չեք կարող դիտել խաղը ուղիղ եթերով, հետեւեք Live Feed-ին, որտեղ կարող եք տեղեկություններ ստանալ խաղի մասին:

Հատուկ աշխարհի առաջնության համար ստեղծվել է հայտ 1tv worldcup: Առաջին անգամ Վրաստանում բոլոր ֆուտբոլային նորարարությունները կլինեն մեկ տարածությունում, ուղիղ եթեր, խաղերի օրացույց եւ կանխատեսում:

ԱՇԽԱՐՀԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԱՄՆ-ՈՒՄ, ԿԱՆԱԴԱՅՈՒՄ ԵՎ ՄԵՔՍԻԿԱՅՈՒՄ

Հունիսի 13-ին ՖԻՖԱ-ի կոնգրեսի ընթացքում, որը կայացել է Մոսկվայում, հայտարարվել է, որ 2026 թվականի աշխարհի առաջնությունը միաժամանակ կանցկացվի երեք երկրում՝ ԱՄՆ-ում, Կանադայում եւ Մեքսիկայում:

Նրանց հետ մրցակցում էր Մարոկկոն:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՋԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋ ԼԻՆԵԼՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ

Սովորաբար, առողջ լինելու գլխավոր պայմանը առողջ կենսակերպն է՝ մարզանքները, սպորտով զբաղվելը, ժամանակին եւ ճիշտ սնվելը: Հետաքրքիր է, վերջին հանգամանքը ի՞նչ ազդեցություն է գործում մարդու առողջության վրա:

Ն. ՄԻՆԱՍՅԱՆ

Բաթումի

Սնունդն անհրաժեշտ է մարմնի աճի, զարգացման եւ վերականգնման համար: Ուստի, պետք է լիարժեք եւ առողջարար մթերք ընդունել: Մեծ նշանակություն ունի սննդամթերքի ճիշտ ընտրությունը, ընդունման ձեւը եւ սննդակարգի պահպանումը: Շատերը, նույնիսկ գիտենալով այս կարեւոր դրույթները, չեն պահպանում դրանք՝ լուրջ վնաս հասցնելով իրենց առողջությանը:

Մասնագետները բազմիցս են նշում, որ լիարժեք սնունդը պիտի պարունակի բավարար չափով սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր, վիտամիններ, հանքային աղեր, բջջանյութ եւ հեղուկներ: Դրա համար օրվա սննդակարգը անպայման պետք է պարունակի սննդանյութերի այս բոլոր խմբերը պարունակող մթերքները: Աշխատեք ընտրել այն սննդամթերքները, որոնք քիչ են պարունակում աղ, կենդանական ճարպեր եւ խոլեստերին: Աղի քանակը նվազեցնելու համար սեղանից ուղղակի հեռացրեք աղամանը:

Պետք է իմանալ նաեւ, որ տարիքի հետ մարդուն անհրաժեշտ է փոխել իր սնվելու սովորությունները: Եթե անհատն ընդունում է սննդի նույն քանակը եւ պահպանում է նույն ֆիզիկական ակտիվությունը 20-40 տարեկանում, ապա 40 տարեկանում նրա մարմնի քաշը, որպես կանոն, ավելի մեծ է լինում: Դա բացատրվում է նրանով, որ տարիքի հետ փոխվում է նյութափոխանակության ակտիվությունը: Տարիքի հետ պետք է օգտագործել մարմինն անհրաժեշտ սննդանյութերով ապահովող, բայց քիչ կալորիաներ պարունակող սնունդ: Այսինքն՝ պետք է ավելացնել սպիտակուցների եւ վիտամինների քանակը՝ զուգահեռ նվազեցնելով ածխաջրերն ու ճարպերը:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ԻՆՉԻ՞Ց ԵՆ ԳԱՅԹԱԿՂՎՈՒՄ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Հետաքրքիր կլիներ պարզել, թե կանանց հարցում որո՞նք են գայթակղման այն գլխավոր հանգամանքները, որոնք գրավում են տղամարդկանց:

Ս.Պ.

Թբիլիսի

Գրավիչ լինելը յուրաքանչյուր կնոջ հնարավորությունների սահմաններում է, շատերին դա տրվում է անգամ ենթագիտակցաբար: Այն ամենը, ինչ կանայք ներդնում են «դուր գալու արվեստում», հաճախ բաղկացած է մի քանի պարզ կանոններից: Եվ այսպես, ինչի՞ց է հյուսվում գրավչության ոստայնը, որտեղ չի կարող երկու ոտքով չհայտնվել փնտրված տղամարդը:

Բարյացակամություն. Քնքուշ, քաղցր ժպիտն է, որ առաջին հերթին չի վրիպում տղամարդու աչքից:

«Կրակոցներ» աչքերով. Գայթակղության այս գաղտնիքն այնքան հին է, որքան աշխարհը, բայց չսպառված, ինչպես աշխարհը... Այդ «կրակոցներին» զոհ գնացած քանի՞ տղամարդ է բանաստեղծ դարձել:

Եղեք նա, ով կաք. Ուրիշների դերերի մեջ մի' մտեք, չէ՞ որ ձեր սեփականը շատ ավելի հետաքրքիր է:

Հումորի զգացումը. Տղամարդն իրեն առավել հանգիստ ու «հարմարավետ» է զգում այն կնոջ ներկայությամբ, որը կարողանում է գնահատել նրա տրտմությունը:

Հոգատար վերաբերմունք. Տղամարդիկ կանանցից պակաս չեն զգում հոգատարության կարիք: Ամենայն անկեղծությամբ հետաքրքրվե'ք նրանով, եւ դա նրա մեջ եւս ցանկություն կառաջացնի ձեզնով հետաքրքրվելու:

Ինտրիգ. Կարիք չկա ձեր կյանքում վերջապես հայտնված «իդեալական» տղամարդուն պատմել անձնական կյանքի մանրամասներ, աշխատեք երկար մնալ խորհրդավորության վարագույրի ետեւում:

Հմայք. Ինքնավստահ կինը միշտ հետաքրքիր է եւ անբացատրելիորեն մագնիսի պես ձգում է տղամարդկանց: Հմայքը անզեն աչքով անորսալի գեղեցկություն է, որ խոցում է մինչեւ հոգու խորքը...

Բացահայտ սիրախաղի փոխարեն նախընտրեք թեթեւ ակնարկները. Տղամարդիկ իրենց նվաճողներ են համարում «կանանց գործում», եւ թող այդպես էլ լինի: Չարժե այդ պատրանքը հօդս ցնդեցնելու միամտություն ցուցաբերել:

Փոքրիկ խորամանկություններ. Արտահայտիչ շրթերկը, գլուխը թեթեւ թեքելը խոսակցության ժամանակ, ուսին ընկած նուրբ խոպոպիկը. ահա կանացիությունը՝ սեքսուալության թեթեւ ակնարկով:

Անթերի արտաքին տեսքը. «Ոճեղեն» կինը գիտի՝ ինչն է գրավում տղամարդուն: Նա ցանկացած իրավիճակում զգում է իրեն՝ ինչպես «ձուկը ջրում», անշտապ հիանում է ինքն իրենով՝ իր վրա սեւեռելով շրջապատողների հետաքրքրված հայացքները:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՖԵՅՍԲՈՒՔ. ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Համացանցից օգտվող ամեն երկրորդը Ֆեյսբուքի օգտատեր է: Օգտատերերի մեծ մասը երիտասարդությունն է, որոնք օրվա զգալի մասը ցանցում են: Իրական կյանքն ու շփումները հետին պլան են մղվում, իրականությունը սկսում է ծանծրալի թվալ: Մարդն ուրախանում է, երբ իրեն like-ում են, հիացմունքի խոսքեր ասում եւ ընկճվում, երբ անտարբերության են մատնում: Երբեմն այս ամենն առաջացնում է համացանցային կախվածություն: Հոգեբանն անդրադարձել է այդ խնդրին:

- Ի՞նչ ազդեցություն է ունենում համացանցը մարդու կյանքում:

- Համացանցը մարդու կյանքում ունի դրական եւ բացասական ազդեցություն: Դրականի դեպքում, մարդիկ համացանցի օգնությամբ գտնում են իրենց հին ընկերներին ու բարեկամներին՝ աշխարհի որ ծայրում էլ լինեն, եւ կապ են պահպանում նրանց հետ, բացի այդ, համացանցը թույլ է տալիս մարդկանց գտնել իրենց համախոհներին, միեւնույն հետաքրքրություններ ունեցող մարդկանց, խմբերում քննարկումներ ծավալել, գտնել իրենց հուզող հարցերի պատասխանները: Բացասականի դեպքում, կարող է առաջացնել համացանցային կախվածություն:

- Ի՞նչ է համացանցային կախվածությունը:

- Դա կախվածությունն է Ֆեյսբուքյան ցանցերից, թվիթերյան եւ մնացյալ բոլոր ցանցերից: Այսինքն, երբ մարդն իր ամբողջ առօրյան անցկացնում է հենց համացանցում, եւ արտաքին միջավայրի կապերն ու շփումները երկրորդային պլան են մղվում:



- Ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ համացանցային կախվածությունը:

- Կարծես թե կախվածությունը նման է խաղամոլության, ինչպես խաղադրույք է անում խաղամոլը, մեկ անգամ հաղթում է ու կրկին փորձում, որպեսզի հաղթելու հաճույքը կրկին զգա, այնպես էլ՝ ֆեյսբուքում, երբ մարդը ինչ-որ նկար է տեղադրում կամ կարծիք է հայտնում ու գնահատվում է, անընդհատ փորձում է գնահատված լինել, լայքեր հավաքել, եւ դա հենց բերում է կախվածության: Ուշադրություն գրավելու համար նույնիսկ կարող է ծայրահեղ քայլերի գնալ, սուիցիդալ վարքի փորձեր կատարել:

- Ինչպիսի՞ մարդիկ են հակված կախվածության, որո՞նք են համացանցային կախվածության պատճառները, եւ ինչո՞ւ են մարդիկ ընկնում կախվածության մեջ:

- Այն մարդիկ, ովքեր բավարարված չեն իրենց շփումներով, հասարակական կապերով, ունեն միայնականության զգացում, անինքնավստահ են, ցանկանում են ընդունված, հասկացված լինել, հակված են կախվածության: Պատճառներից մեկն էլ գնահատված լինելու պահանջն է: Հնարավոր է, որ մարդը իրական կյանքում չի կարողանում դրսեւորվել, ինքնարտահայտվել, իսկ համացանցում, երբ իրեն ոչ ոք չի տեսնում, նա ազատորեն արտահայտվում է:

ԿԱՆՈՆՆԵՐ՝ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Որքա՞ն հաճախ ենք մենք օրվա ընթացքում մեզ վրդովված ու հոգնած զգում: Դրանից խուսափելու համար հետեւեք նշված խորհուրդներին:

Կարեւոր կանոն է աշխատանքային վայրը հարմարավետ դարձնելը, որպեսզի հաջորդ 8 ժամը տանջանք չլինի:

Ճիշտ սնվել.

Փորձեք բաց չթողնել նախաճաշը եւ հրաժարվեք վնասակար թեթեւ ուտելիքից:

5-րոպեանոց ընդմիջումներ.

Օրվա ընթացքում 5-րոպեանոց մարզանքներ արեք, դա կօգնի առույգանալ:

Խնայեք տեսողությունը.

Ամբողջ օրը մի նստեք մոնիտորի առջեւ, աշխատեք շեղվել: Աչքերի համար նախատեսված վարժություններ արեք:

Առանց ընդմիջման աշխատելով՝ դուք չեք բարձրացնում արդյունավետությունը, հակառակը՝ «սպառվում եք»: Եվ հիշեք՝ աշխատանքը կարեւոր է, սակայն դա ձեր ամբողջ կյանքը չէ, այլ դրա մի մասը: Հանգստացեք, ձեզ ու ձեր մտերիմներին, զբաղմունքին ժամանակ տրամադրեք:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Երբ վիշտը քեզ այցելության գա, նայիր շուրջդ եւ մխիթարվիր. կան մարդիկ, որոնց բաժինն ավելին է քոնից:

ՍԵԴՐԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ
(1896-1957)
Իրանահայ գրող

Որքան շուտ անցան ժամերը ջահել, ես ափսոսում եմ, որ աղջիկներին չեմ կարող նայել:

Իոսեբ Նոնեշվիլի
(1918-1980)
Վրաց բանաստեղծ

Վիշտն ավելի ուժեղ է ճնշում, երբ տեսնում է, որ իրեն անձնատուր են լինում:

ՈՒԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐ
(1564-1616)
Անգլիացի գրող

Կնոջ հետ երջանկությունը հնարավոր է միայն հոգեկան շփման լիակատար անկեղծության պայմանով:

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ
(1868-1936)
Ռուս գրող

Ամեն մի դրություն գեղեցիկ է, եթե այն բնական է ու բանական:

ԳՅՈԹԵ
(1749-1832)
Գերմանացի գրող

Պատմությունը մեր գործերի գանձարանն է, անցյալի վկան, օրինակ ու խրատ՝ ներկայի համար, նախազգուշացում՝ գալիքի համար:

ՍԵՐՎԱՆՏԵՍ
(1547-1616)
Իսպանացի գրող

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ Կինը ընկերուհուն.

- Ես մինչեւ երեկ չգիտեի, թե իմ ամուսինը որտեղ է լինում գիշերները, երեկ եկա տուն, տեսնեմ, չէ՛, տանն է լինում...

☺ - Բայց դու ի՞նչն ես:Հերիք է՝ մի սիրուն աղջիկ տեսնես, միանգամից մոռանում ես, որ կին ունես:

- Սխալվում ես... ես հենց էդ ժամանակ էլ էդ մասին հիշում եմ:

☺ Զանգում է հեռախոսը:

Կինը մոտենում է հեռախոսին, ամուսինն արագ ասում է.

- Եթե ինձ հարցնեն, կասես՝ տանը չեմ:

Կինը վերցնում է լսափողը.

- Ալո: Ո՛չ, ո՛չ, ամուսինս տանն է...

Ամուսինը.

- Ես խնդրել էի չասել, որ տանն եմ:

- Բայց քեզ չեն հարցնում:

☺ Կինը.

- Սիրելիս չե՞ս կարծում, որ վարունգի դիմակը ինձ օգնում է բարելավել իմ արտաքին տեսքը:

Ամուսին.

- Իհարկե, սիրելիս, միայն թե չեմ հասկանում՝ ինչո՞ւ ես երբեմն այն հանում:

☺ - Անցած շաբաթ կնոջս աչքը ավազ ընկավ, տարա բժիշկի,վրաս 20 դոլար նստեց...

- Էդ ինչ է, ո՛ր. էն օրը կնոջս աչքին մի մուշտակ ընկավ, վրաս 2000 դոլար նստեց:

☺ - Ինչո՞ւ ես դու կնոջդ ծխել թողնում:

- Դե', գոնե մի անգամ պիտի՞ լռի, թե՞ չէ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՓՈԽՀԱՐԳԱՆՔԻ ՎՐԱ ԽԱՐՍՎՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՅԱՑԱՎ Ն.ՓԱՇԻՆՅԱՆ - Վ.ՊՈՒՏԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հունիսի 13-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ռուսաստանի Դաշնություն աշխատանքային այցի շրջանակում, Կրեմլում հանդիպում ունեցավ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Ռազմավարական գործընկեր երկու պետությունների ղեկավարները քննարկեցին հայ-ռուսական երկկողմ ու բազմակողմ ծեւաչափով հարաբերությունների օրակարգին եւ համագործակցությանը վերաբերող հարցեր, անդրադարձան տարբեր, այդ թվում՝ քաղաքական, տնտեսական, ռազմատեխնիկական եւ այլ ոլորտներում համագործակցության հետագա զարգացմանն ու ընդլայնմանն ուղղված թեմաներին:

Զրուցակիցները կարեւորեցին երկու դաշնակից պետությունների միջեւ կապերի շարունակական եւ հետեւողական խորացումը, ինչը կնպաստի առեւտրաշրջանառության ծավալների ավելացմանն ու տարբեր ներդրումային ծրագրերի իրականացմանը:

Նիկոլ Փաշինյանն ու Վլադիմիր Պուտինը քննարկեցին նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջանային նշանակության այլ հարցեր:

Իր խոսքում, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդգծեց Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ հարաբերությունների հատուկ բնույթը եւ հույս հայտնեց, որ դրանք առավել արդյունավետ զարգացում կունենան:

- Ինձ համար շատ կարեւոր է, որ մենք ունենք, եւ վստահ եմ, որ ապագայում էլ կունենանք հաճախ հանդիպելու եւ մեր հարաբերությունների օրակարգի ամբողջ շրջանակը քննարկելու հնարավորություն: Իհարկե, մենք հույս ունենք դրական ու կառուցողական երկխոսության, եւ համոզվել ենք, որ մեր երկխոսությունը հենց այդպիսին է: Ես շատ ուրախ եմ դրա համար,- եզրափակեց Նիկոլ Փաշինյանը:

ՔՆՆԱՐԿՎԵԾ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Աշխատանքային այցով Ռուսաստանի Դաշնությունում գտնվող վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպեց ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի հետ:

Զրուցակիցները քննարկեցին հայ-ռուսական տնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված մի շարք հարցեր, անդրադարձան տնտեսության տարբեր ճյուղերում համատեղ իրականացվող ծրագրերի ընթացքին ու առաջիկա անելիքներին:

Հանդիպմանը Նիկոլ Փաշինյանը եւ Դմիտրի Մեդվեդեւը կարեւորեցին երկկողմ առեւտրաշրջանառության ծավալների ավելացումը եւ այդ համատեքստում ընդգծեցին հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի ակտիվ ու արդյունավետ աշխատանքի անհրաժեշտությունը:

Զրուցակիցները մասնավորապես անդրադարձան ԵԱՏՄ շրջանակում փոխգործակցությանը, ինչպես նաեւ էներգետիկայի, արդյունաբերության, ներդրումային եւ հումանիտար ոլորտներում համագործակցության ընդլայնմանը վերաբերող հարցերի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Հունիսի 13-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանն այցով գտնվում էր Ստեփանակերտում, որտեղ հանդիպում ունեցավ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հետ:

Նախագահները քննարկցին հայկական երկու պետությունների փոխգործակցությանն առնչվող տարբեր հարցեր: Այս մասին տեղեկացրին ՀՀ նախագահի աշխատակազմից:

Այցի ընթացքում Հայաստանի ու Արցախի նախագահները, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի եւ Արցախի Ազատամարտիկների միության նախագահ Սամվել Կարապետյանի ուղեկցությամբ, այցելեցին նաեւ Արցախի ազատամարտիկների զբոսայգու շինհրապարակ, ծանոթացան շինարարական աշխատանքների ընթացքին:

«ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳԻՐԸ ԿՄԵԿՆԱՐԿԻ ՕԳՈՍՏՈՍԻՆ

Ինչպես հայտարարեց Հայաստանի սփյուռքի նախարար Մխիթար Հայրապետյանը, «Արի տուն» ծրագրի մեկնարկի հավանական ժամկետը օգոստոսի 9-10-ն է:

- «Արի տուն» ծրագրի մեկնարկի ժամկետն ավելի կոնկրետ կհայտարարենք հունիսի 13-ին, բայց, ամենայն հավանականությամբ, այն կլինի օգոստոսի 9-10-ը: «Արի տուն»-ը եւ մյուս ծրագրերը նախարարության մեր թիմի աշխատանքի ընթացքում արդյունավետ են լինելու: Բոլոր այն ծրագրերը, որոնք մենք չենք կասեցրել եւ իրականացնում ենք, լինելու են նպատակաուղղված կոնկրետ արդյունքի,-ասաց Հայրապետյանը:

Նրա կարծիքով, ծրագրի բուն նպատակը ոչ այնքան հայրենադարձությունն է, որքան երիտասարդների՝ հայրենիքի հետ կապի ուժեղացումը: Դա եւս մեկ քայլ է Հայաստանի հետ կապն ամրապնդելու համար: Շատերը նախկինում երբեւէ չեն եղել հայրենիքում:

- Բացի այդ, ծրագրի մեջ մտցված է կրթական բաղադրիչ՝ լեզվի, պատմության դասընթացներ, մշակութային ժառանգությանը ծանոթացում, ճանաչողական այցեր,- ասաց նախարարն ու հավելեց, որ պատրաստվում են դրանք լիովին իրագործել:

ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հունիսի 13-14-ը ԵԱՀԿ Մինսկի համանախագահներ Իգոր Պոպովը (Ռուսաստան), Էնդրյու Շեֆերը (ԱՄՆ), Ստեֆան Վիսկոնտը (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անչնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրչիկը Երեւանում հանդիպումներ ունեցան Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ նախագահ Արմեն Սարգսյանի հետ: Հանդիպումներում մասնակիցները կարեւորեցին կողմերի հավատարմությունը հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ ստանձնած հանձնառություններին, ինչպես նաեւ Վիեննայի, Սանկտ Պետերբուրգի եւ ժնեւի գագաթաժողովներին ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման անհրաժեշտությունը:

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՀԱՄԱՍՊԱՍՊ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ

Հունիսի 14-ին Մոսկվայի Մեծ հայրենականի կենտրոնական թանգարանում հանդիսավորությամբ բացվեց զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ, Խորհրդային Միության հերոս Համազասպ Բաբաջանյանի կիսանդրին: Այն թանգարանին Հայաստանի Հանրապետության անունից փոխանցեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Միջոցառմանը ներկա էին նաեւ վարչապետի տիկին Աննա Հակոբյանը, Ռուսաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Վարդան Տողանյանը, պաշտոնական այլ անձինք:

ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

Հայաստանի Ազգային անվտանգության ծառայության մեկուսարանից ազատ արձակվեց ԼՂՀ պաշտպանության նախկին նախարար Սամվել Բաբայանը:

Վճռաբեկ դատարանը նրան կալանքից ազատման որոշում է կայացրել եւ բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը Սամվել Բաբայանի եւ մյուսների գործով ընդհանուր իրավասության դատարանի վճիռը անփոփոխ թողնելու մասին՝ գործը ուղարկելով նոր քննության:

Վճռաբեկը ազատ արձակեց Բաբայանին՝ հաշվի առնելով ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների երաշխավորությունը: Գործով անցնող 3 տարվա ազատազրկման դատապարտված Սանասար Գաբրիելյանը եւս ազատվել էր կալանքից: Նրա եշխավորությամբ էր հանդես եկել «Ծառուկյան» խմբակցության 12 պատգամավոր:

Նշենք, որ Սամվել Բաբայանը դատապարտվել էր 6 տարվա ազատազրկման:

ԿԱՅԱՑԱՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 9-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Երեւանում կայացավ «Հայոց պետականությունը եւ հայ լրագրությունը» խորագրով Լրագրողների համահայկական 9-րդ համաժողովը:

Համաժողովի բացմանը սփյուռքի նախարարի տեղակալ Բաբկեն Տեր-Գրիգորյանը ներկաներին փոխանցեց նախարար Մխիթար Հայրապետյանի ողջույնի խոսքը, որտեղ մասնավորապես ասվում է. «Սիրով ողջունում եմ ձեզ նոր Հայաստանում ու հայտնում իմ խորին երախտիքը ձեր ներկայության եւ այն աջակցության, այն խանդավառության ու զորակցության համար, որ դուք ցուցաբերեցիք թավշյա հեղափոխության կայացման ու սփյուռքյան լրատվամիջոցներում նրա ողջ ընթացքն ու փիլիսոփայությունը պատշաճ ներկայացնելու, լուսաբանելու գործում: Խորհրդանշական էր, որ հենց Հայոց պետականության վերակերտման 100-րդ տարեդարձի նախօրեին սկիզբ առած խաղաղ անհնազանդության շարժումը համազգային դրսեւորում ստացավ: Սփյուռքը թեւ ու թիկունք դարձավ սիրո ու համերաշխության հեղափոխությանը, որը հաղթեց ողջ հայ ժողովրդի միասնական կամքով՝ սկզբնավորելով ազգային զարթոնքի, Հայոց պետականության ամրապնդման, երկրի իմիջը բարձրացնելու նոր փուլ»:

Բացմանը ողջույնի խոսքով հանդես եկան Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Սաթիկ Սեյրանյանը, Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության փոխնախագահ Գայանե Առաքելյանը, Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող մարմնի նախագահ Շահան Գանտահարյանը:

Համաժողովի աշխատանքներն ընթացան հետեւյալ թեմայով.

«Թավշյա հեղափոխության անդրադարձը սփյուռքի քաղաքական եւ հասարակական կյանքում». զեկուցող՝ Հունաստանի «Հայաստան» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Դավիթ Այվազյան:

Հաջորդ նիստերին քննարկվեցին հետեւյալ թեմաները. «Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումը եւ հայ լրագրությունը», «Հայ լրագրությունը խորհրդային միության տարիներին», «Հայաստանի Հանրապետության անկախությունը եւ հայ լրագրությունը»:

Մայիսի 31-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում շարունակվեցին Լրագրողների 9-րդ համաժողովի աշխատանքները՝ հետեւյալ թեմաներով. «ՀՀ սփյուռքի նախարարության առաջնահերթությունները», «Հայաստանի Հանրապետության առջեւ ծառացած մարտահրավերները եւ հայ լրագրությունը», «Հայաստանի Հանրապետության, Արցախի, Արեւմտյան Հայաստանի եւ Մերձավոր Արեւելքի ու Արեւմտյան Հայաստանի հայերի հիմնախնդիրները կարող են լուծվել Հայկական հարցի լուծման միջոցով»:

Համաժողովի ավարտին քննարկվեցին նաեւ Լրագրողների համահայկական համաժողովների հետագա կազմակերպման վերաբերյալ մի շարք հարցեր:

Սփյուռքի նախարարության տեղեկատվության եւ հեռահաղորդակցության վարչության պետ Վաղինակ Վարդանյանը աշխատանքային խմբի անունից շնորհակալություն հայտնեց համաժողովի աշխատանքներին մասնակցելու համար եւ նշեց, որ համաժողովը եւս մեկ հանգրվան հանդիսացավ համահայկական միասնական տեղեկատվական հարթակ ստեղծելու ճանապարհին:

Հունիսի 1-ին համաժողովի մասնակիցները հանդիպեցին կրթության եւ գիտության նախարար Արայիկ Հարությունյանի հետ:

Նույն օրը համաժողովի մասնակիցները հանդիպեցին արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի հետ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒՆԻՍ

16.06.2018. Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտը

18.06.2018. Սուրբ վկաներ Անտոնինոսի, Թեոփիլոսի, Անիքտոսի եւ Փոտինոսի հիշատակության օր

19.06.2018. Դանիել մարգարեի եւ Սեդրակ, Միսաք, Աբեդնագով երեք մանուկների հիշատակության օր

21.06.2018. Սուրբ թարգմանիչներ Իսահակի եւ Մեսրոպի հիշատակության օր

Տարվա ընթացքում Հայ եկեղեցին Սուրբ Սահակ Պարթեւի եւ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի հիշատակը տոնում է երկու անգամ: Թարգմանչաց տոնը նշվում է Հոգեգալստյան չորրորդ կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը: Երկրորդ անգամ Հայ Առաքելական եկեղեցին Սուրբ Թարգմանիչ Վարդապետների հիշատակը տոնում է Սուրբ Խաչի Դ կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը:

ՏԱՐԵԼԻՑ

ԹԲԻԼԻՍՅԱՆ ԱՂԵՏԻՑ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՆՑ

21 զոհված, երկու անհետ կորած եւ հազարավոր տուժած քաղաքացիներ. հունիսի 13-ին լրացավ թբիլիսյան տարերային աղետի երրորդ տարին:

2015 թվականի հունիսի լույս 14-ի գիշերն ափերից դուրս եկած Վերե գետը Թբիլիսիում ջրի տակ առավ բնակելի տներ, Թբիլիսիի կենդանաբանական այգին, Թամազ Էլիզբարաշվիլու հիմնած՝ շների մասնավոր ապաստարանը: Ջուրն ավերել էր քաղաքի ենթակառուցվածքը, տներ, ճանապարհներ, կամուրջներ, թունելներ, հաղորդակցական համակարգեր: Հեղեղման հետեւանքով տուժել էր ավելի քան 200 ընտանիք, զոհվել՝ 21 մարդ, իսկ երկուսը մինչ օրս համարվում են անհայտ կորածներ:

Թբիլիսյան աղետի երրորդ տարելիցի կապակցությամբ, հունիսի 13-ին անցկացված ճեպ-ասուլիսում Վրաստանի մայրաքաղաքի փոխքաղաքագլուխ Սոֆիո Խունցարիան հայտարարեց, որ ծրագրվում է Թբիլիսիում կանգնեցնել ամբողջ աշխարհով հայտնի դարձած Բեգի գետաձիու հուշարձանը, որը, 2015 թվականի հունիսի ավերիչ հեղեղումից հետո, զբոսնում էր Հերոսների հրապարակում՝ Կենդանաբանական այգուց ոչ հեռու:

- **Հունիսի 13-ի ողբերգության երկրորդ օրն ամբողջ աշխարհը խոսում էր փողոցում զբոսնող գետաձիու մասին, որը փրկվել էր տարերքից: Այնուհետեւ, Բեգին յուրատեսակ խորհրդանիշ դարձավ արվեստի գործիչների, կամավորների համար, ուստիեւ մայրաքաղաքի քաղաքապետարանը որոշել է կանգնեցնել Բեգիի հուշարձանը,**- ասաց փոխքաղաքապետը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

«ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԻ ՏԱԿ»

Հունիսի 8-ին Ռուսթավի դրամատիկական թատրոնում, «Ոչ վրացալեզու դպրոցների աշակերտների մասնագիտական զարգացման» ծրագրի շրջանակներում, ազգային փոքրամասնության ներկայացուցիչների մասնակցությամբ, տեղի ունեցավ «ᲗᲐᲕᲘᲡ ᲛᲖᲔᲡ ᲥᲕᲔᲨ («Վրաստանի արեւի տակ») միջոցառումը:

Բացմանը ներկա էին Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Լիա Գիգաուրին, Քվեմո Քարթլիի մարզպետի տեղակալ Զաուր Դարգալին, Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթիի, Կախեթիի եւ ազգային փոքրամասնություններով բնակեցված այլ շրջանների աշակերտներ:

Ուրախությամբ նշում եմ, որ միջոցառմանը մասնակցում էինք նաեւ մենք՝ Ծալկայի մունիցիպալիտետի Օզնի եւ Աշխալա գյուղերի աշակերտներս՝ ներկայացնելով Աջարիան երգով, պարով, աստմունքով եւ ուտեստներով:

Միջոցառման հիմնական նպատակը վրաց լեզվի տարածումն էր ոչ վրացալեզու շրջաններում եւ ազգային փոքրամասնությունների ներգրավումը Վրաստանի կյանքում: Եվ ես ուզում եմ բոլոր մասնակիցների կողմից շնորհակալություն հայտնել «Վրաստանի արեւի տակ» միջոցառման կազմակերպիչներին:

ԱՆԱՀԻՏ ՀԱՍԵՏՅԱՆ
Ծալկայի մունիցիպալիտետ գյուղ Օզնի

ՓԱՌԱՏՈՆ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՋԱԶԻ ՌԻԹՄԵՐՈՎ

Սիա արդեն իններորդ անգամ Թբիլիսիում անցկացվեց ամենամյա KavkazJazz երաժշտական փառատոնը: Փառատոնի նախաձեռնող եւ հիմնադիր, թբիլիսյան արտմենեջեր, 30-ամյա Ելենա Մեչիտովան ասաց, որ միջոցառման գլխավոր նպատակը Հարավային Կովկասում ջազի զարգացումն ու ժողովրդականացումն է՝ որպես տարածաշրջանի ժողովուրդների միջեւ մշակութային երկխոսության միջոց:

2010 թվականին հիմնադրված փառատոնը Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի եւ Թուրքիայի երիտասարդ երաժիշտներին հնարավորություն ընձեռեց միմյանց հետ ծանոթանալու եւ քաղաքականությունից զերծ միջավայրում հաղորդակցվելու համար:

Փառատոնի կազմակերպման սկզբնական փուլում, հարեւան Հայաստանի եւ Ադրբեջանի գործընկերների հետ կապերի հաստատման գործում մեծապես աջակցեց ԱՄՆ դեսպանությունը: Փառատոնին ֆինանսական օգնություն են ցուցաբերում Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարությունը, ինչպես նաեւ Թբիլիսիի քաղաքապետարանը:

Փառատոնի գլխավոր բնորոշիչն այն է, որ ծրագրում ներկայացված է հեղինակային երաժշտությունը, որոնք կատարվում են արեւելյան երաժշտական գործիքներով, ինչը էքսոջազի յուրատեսակ ազդակ է, այսինքն՝ ավանդական ջազային երաժշտությունը սինթեզվում է կովկասյան ժողովուրդներին հատուկ երաժշտական ռիթմերին:

Այս տարի, ինչպես անցած տարիներին, փառատոնում հաջող ելույթ ունեցան «Կովկասջազքառյակ» հավաքական կոլեկտիվը, որի կազմում էին վրաց թմբկահար Գիորգի Մելիքիշվիլին, ադրբեջանցի դաշնակահար եւ երգահան Սալման Գամբարովան, Հայաստանից ճանաչված սաքսոֆոնահար, Երեւանի կոնսերվատորիայի պրոֆեսոր, երգահան եւ դիրիժոր Արմեն Ուսունցը, բասկիթառահար, թուրք երաժիշտ Սենթրուկ Օստաշը:

ԱՐՏԵՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Լիճ Հյուսիսային Եվրոպայում: 6.Ֆ.Դոստոեւսկու ստեղծագործություններից: 9.Որեւէ ծառայության դիմաց տրված ոչ օրինական գումար: 10.Անթերի, անսխալ, անշեղ: 12.Աչքածակ, անկուշտ, անհագ: 13.Վրաց քաղաքական կին գործիչ ... Ջուրաբիշվիլի: 15.Անդունդ, գահավանդ, փոս: 16.Մեսրոպյան այբուբենի զինվոր: 18.Խոհանոցային պարագա, իր: 20.Իտալացի մեծ բանաստեղծ ... Ալիգերի: 22.Մ.Մաշտոցի 32-րդ տառը: 23.«... լեռներ քեզ ապաստան, Անդրանիկ» (ժող. երգ՝ նվիրված հայ Զորավարին): 25.Արեւմտահայ գրող ... Օտյան: 26.Սառը, ցուրտ: 28.Գետի սկիզբը: 30.Բնության ահեղ երեւույթ: 32.Խոտակեր կենդանի: 33.Անշունչ առարկա: 34.Թողնել հեռանալ: 35.«... կուգաս, ղարիբ բլբուլ» (Սայաթ-Նովա): 38.Միանիշ թիվ: 39.Հայտնի քաղաք Նիդեռլանդիայում: 41.Ռուս մեծ բանաստեղծ Մ.Լերմոնտովի ստեղծագործություններից: 42.Հայ դիցուհի: 44.Կետադրական նշան: 45.Դ.Մենդելեեւի քիմիական տարրերից: 46.Ստորոգյալի լրացում: 47.Հարվածային երաժշտական գործիք: 49.Դեմ, ոչ կողմնակից: 51.Հայաստանի անվանումներից: 52.Կավե ջրաման: 55.Երգիչ ... Մնացականյան: 56.Լատինաամերիկյան պար:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Թիֆլիսի եռալեզու սիրերգակ Սայաթ-...: 3.Մոսկվացի հանրահայտ երաժշտագետ, ով Ա.Խաչատրյանի մեջ անկասելի սեր է առաջացրել երաժշտության նկատմամբ: 4.Մարզ Հայաստանում՝ ... ձոր: 5.Անվանի դերասանուհի, Հայաստանի վաստակավոր արտիստուհի ... Թուխմանյան: 6.Թռչուն: 7.Ս.Եսենինի հայուհի հերոսուհին: 8.Լեզվաբան ... Առաքելյան: 11.Թիֆլիսի հայոց թատրոնի անվանի դերասան: 14.Իտալացի գրող, «Չոչարա» վեպի հեղինակ: 15.Կասկածել, տատանվել: 17.Քաղաք Ուկրաինայում, Դնեպրոպետրովսկն այժմ: 19.Քաղաք Ղրիմում: 20.Կանգ, հանգիստ: 21.Հոլիվուդյան կինոմրցանակ: 23.Լեռ Հայաստանում: 24.Քուռ գետի անվանումներից: 27.Ս.Փարաջանովի ֆիլմերից՝ «Աշուղ ...»: 29.Բույսի տեսակ: 31.«Սայաթ-Նովա» համույթի ձայնահարդար, քամանահար, երգիչ Մխիթարը: 35.Պետություն Աֆրիկայում: 36.Ա.Միկոյանի ծննդավայր գյուղը: 37.Հայոց թագավոր: 39.Հայկական ժողովրդական երգ: 40.Քաղաք Իրաքում: 43.Հայաստանյան «Վան» ռադիոկայանի հաղորդավար ... Գլումով: 44.Սփյուռքահայ գրող ... Շահնուր: 48.Թուրքիայի տարադրամը: 50.Քանդակագործներ ե'ւ Սարգսյանը, եւ Շիրազը: 53.Մարդու մարմնի մաս: 54.Մուգ կարմիր:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Խաբեբա: 8.Ափսե: 10.Դրյու: 11.Սար: 13.Ամենա: 15.Ոստայն: 16.Բլան: 17.Մարի: 19.Կանուխ: 23.Իրավամբ: 26.Ռիկո: 27.Բրանլ: 28.Չամիչ: 29.Ժենյա: 32.Էվրա: 33.Շրջակա: 36.Մկա: 37.Ավազ: 39.Լճակ: 40.Նարտ: 42.Աղա: 43.Եսայի: 44.Ֆրեր: 45.Կուտ: 46.Ծծակ: 47.Ալտ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հազալ: 2.Գեհեն: 3.Սադամ: 4.Մայոր: 5.Փեսա: 6.Կարն: 9.Փուսիկ: 12.Այրուկին: 14.Մատրա: 18.Եվլե: 20.Առարկա: 21.Նիմ: 22.Խոչ: 23.Իրավիճակ: 24.Անժամկետ: 25.Մայր: 30.Նշանած: 31.Աջարիա: 34.Ավարա: 35.Ազարտ: 38.Աղել: 41.Այծ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445